## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի փետրվարի 14-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով գնման պայմանագրի N 1 համաձայնագիրը 2018թ. դեկտեմբերի 24-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Հիմք ընդունելով Պայմանագրի 8.8 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 43 հատ ծաղկային կոմպոզիցաների (Ծաղկեպսակ մեծ) մասով:

***Փոփոխության նկարագրություն*** Հիմք ընդունելով Պայմանագրի 8.8 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 43 հատ ծաղկային կոմպոզիցաների (Ծաղկեպսակ մեծ) մասով:

Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում N 1 համաձայնագրի գինը նվազում 1 720 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամով և կազմում է 2 280 000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

***Փոփոխության հիմնավորում:*** Չի հակասում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Ամիրյանին:

Հեռախոս՝ *010-29-43-53*:

Էլ. փոստ՝ a.*amiryan. mil.am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## N ԳՀԱՊՁԲ-3/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

24 -ը դեկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ն. Քոսակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից՝ հիմք ընդունելով 14.02.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-3/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.8 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 8.8 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 43 հատ ծաղկային կոմպոզիցաների (Ծաղկեպսակ մեծ) մասով:

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում N 1 համաձայնագրի գինը նվազում է 1 720 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամով և կազմում է 2 280 000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

### 2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Գայդայան փ., հար 36շ.,բն. 1, |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570023676110100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02624964 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ն. ՔՈՍԱԿՅԱՆ |